

2962

616-9

h-33

616. 9

h-33

ԻՆՉ ԲԱՆԷ *1893*

Թ Ա Ն Տ Ա Խ Տ Ը

ԻՆՉ ԲԱՆՈՂ, ԿԱՐՅԵԻ Է ՓՐԿՈՒՅԻ, ՆՈՐԱՆԻՅ

ԵՒ ՍՅԻ.

ՏԱՐԱՓՈՒԹԻԿ ՏԿԱՐՈՒԹԻԿՆԵՐԻՅ:

ԺՈՂՈՂՐԴՍԿՈՆ ԵՒ ՀԱՍՏԱՐԱԿՈՅ ՄԱՏՁԵԼԻ

Խ Ր Ա Տ

ԲԺԻՇԿ Պ. Ա. ԻԼԻՆՍԿԻՈՅ

Քոյրը այս կանոնները՝ ամեն մէկը պարտադէր է իմանալ և կատարել, եթէ միայն, եւ չէ՛ կամենում փչանալ տաճարիցիկ հեռանդու թիւնից: Եջեւ 44.

առ խառնակ 12002

Թ. Ա. Ր. Գ. Մ. Ա. Ն. ՈՒ. Թ. Ի. Ն.

ԱՐԳԱՐՈՒ Ս. ԳՈՒԼԱՍԻՐԵԱՆՅՅ

1880—Ռ. Յ. Ի. Թ.

2010

ԹԱՐԳՄԱՆՁԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔԸ

- 1 Նոր տաղարան կամ ազգային երգարան 1866 30 Կ.
- 2 Դաւիթ բէգ, ընտիր մատենադրութիւն 1871 60 Կ.
- 3 Ստորագր. Այլիվանից Ս. Գեղարդայ 1873 1 ր.
- 4 Ծաղիկ ընտանեաց Ա տարի 1876 10 Կ.
 " " ր. տ. 1877 15 Կ.
 " " Գ. տ. 1878 15 Կ.
 " " Գ. տ. 1879 15 Կ.
 " " Կ. ա. 1880 15 Կ.
- 5 Սենեքերիմ Թագ. Հայոց Վասպուրականի ողբերգ. 1878 1 ր.
- 6 Բրիչ քննութիւն և հերքում 15 Կ.
- 7 Ի՞նչ բան է ժանտախտը 15 Կ.
- 8 Օրացոյց վասն 1876, 1877, 1878, 1879, և 1880 թ:
 " փոքրադիր 1879 և 1880 թ:

616.9
 ԿԼԻՅԱՅ 447

(56)

ԻՆՉ ԲԱՆԷ

Ժ Ա Ն Տ Ա Խ Տ Ը

ԻՆՉ ԲԱՆՈՎ ԿԱՐԵԼԻ Է ՓՐԿՈՒՅԼ ՆՈՐԱՆԻՅ

ԵՒ ԱՅԼ

ՏԱՐԱՓՈՒԽԻ ՏՆԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՅ:

ԺՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԿԱՑ ՄԱՏՁԵԼԻ

Խ Ր Ա Տ

ԲԺԻՇԿ Պ. Ա. ԻԼԻՆՍԿԻՈՅ

Բոլոր այս կանոնները՝ ամեն միւր պարտական է իմանալ և կատարել եթէ՛ միայն, նա չէ՛ կամենում փչանալ տարախոտիկ հիւանդութիւնից: Եջէս 44.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԳԱՐՈՒ Ա. ԳՈՒԼԱՍԻՐԵԱՆՑ

1880—ՌՅԻՐ

16505

ՀԱՅ ԳՆԱԿ

ՉԵՆՑՈՐԱԿ

ՉԵՆՑՈՐԱԿ

Дозволено Цензурою Тифлиса
18 Июня 1879 г.

ՀԱՅ ԳՆԱԿ

ՉԵՆՑՈՐԱԿ

ՉԵՆՑՈՐԱԿ

ՆԵՐՆԻԱՆ


Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԳԱՐՈՒ Ս. ԳՈՒԱՄԻՐԵԱՆՅ:

ԹԱՐԳՄԱՆԶԻ ԿՈՂՄԻՏ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՐ:

Այս հասարակ աշխարհիս մէջ,
կա՛ն այնպիսի բաներ՝ որոնք պա-
հանջում են իւրեանց համար՝ ԽՐԱՏ
եւ ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ: Ա՛յն էրբէկ ի
մի ճշմարտութիւն է, որ մարդոցս
համար ամենագերազանցն է
նորա սուղընթիւնը: Այժմ՝ մէկը չունէ
առողջութիւն կամ վարակուած
է տարափոխիկ ախտերով, ու-
րե՛մն նա կորած է: Իսկ միա-
ները՝ երկրորդական և երրոր-
դական խնդիրներ են: Տայց
առողջութիւնը:

51815
1001



իւր խրատները, նախազգուշու-
թիւնները և այլն: Աւելի կ'զը-
լանայ կատարել նոցա՝ նշա-
նակում է, որ նա իրաւունքից
զրկուում է, տկարանում է,
թուլանում է, և հետզհետէ կոր-
չում . . . : Այլ միայն հետա-
մուտ է եղած այսպիսի փորձա-
ռութեանց՝ նա անշո՛ւշտ մեզ
հետ աջակցելով կ'համաձայնի:

Վերջին ժամանակներումս,
բոլոր լրագրները լցուած էին
և են համարեա՛ ժանտախտի,-
տարափոխիկ տխտի, վերաբեր-
մամբ զարհուրելի հեռագրերով.
որ Ռուսաստանում լոյս է ըն-

կել՝ ՍԱՐՍԱՓԵԼԻ ԺԱՆՏԱԽՏ: Ուստի
բարեխնամ կառավարութիւնը
փութացաւ դիմել զանազան
զօրաւոր միջոցների՝ այն է՝ իս-
կոյն վրայ հասան, և փակելով
շրջապատեցին այս սարսափելի
տխուր տեսարանը՝ մայրաքա-
ղաքների քանքարաւոր բժշկա-
պետները, որոնք և սկսեցին
զրել զանազան յօդուածներ թէ՛
լրագրերում և թէ՛ առանձին
տեւորակներով: Այս այսպէս զը-
ժնդակ լուրք արագութեամբ
տարածուելով ամենայն տեղ՝
մինչև անգամ և արտասահմա-
նի պետութեանց մէջ. սկսեցին

ամենքը նախազգուշութեան պինդ կանոններ պահպանել...: Այս միջոցներում թէ՛ և մեր Հայաստանի կողմերը Հպատակեցաւ ժանտախտ, բայց այնու ամենայնիւ երևեցան տարափոխիկ հրատազնապ արհաւիր, Գերմանական, Ժողով, ներքին քննարկ, և բառաւելապէս՝ Ժողովարաններու (շօքայ): Մենք շատ անգամ հետաքրքրութեամբ ականատես լինելով այս տխուր երևոյթներին՝ տեսել ենք և տեսնում՝ որ, որ և իցէ այս վերոյիշեալ ցաւերից մինը, եթէ մէկին կաշում է ուրեմն դնում է նա իւր բոյնը,

ամբողջ գերդաստանի մէջ: Իսկ գերդաստունը անգիտակցաբար՝ փոխանակ պահպանողական միջոցներով զգուշանալու, սկսում է վարակուած տկարի չորս կողմերը շրջապատել, շորերը նորա կողինքին կպցրած նստել, և վերջապէս աւելի՛ մերձաւորք՝ բերանները բերնին դրած անցուցանել իւրեանց օրերը...: Այս պատահում է այնպէս՝ որ տկարը վեր է կենում անկողնից, իսկ միւսները կարգաւ մէկը միւսի ետեւից պարկուծ են հետեւապէս, այնպէս որ, ներկայանում են այդպիսի տները,

փոքրիկ՝ բայց կատարեալ հի-
ւանդանոց: Ա՛ւերջապէս չ՝տե-
սանք այս ցաւերով տկարացած-
ներեց մի տուն՝ որ մի հիւան-
դով բաւականանար...: Ա՛հա՛
այս ողբալի դուրժեան առաջն
առնելու համար՝ յիրաւի տե-
ղական բժիշկները զանազան
պատուէրներ տուցին ժողո-
վրդին, որ մեծ օգնութիւն եղաւ:
Ա՛հա՛ այս իսկ միջոցով հասաւ
մեր ձեռքը Պետերբուրգի հրա-
չակաւոր Բժշկի- Դոկտօրի պ.
Պ. Ա. Իլինսկոյ՝ մի ամենա-
հարկաւոր փոքրիկ Ռուսերէն
տետրակը, հետեւեալ վերնագրով

„Что такое Чума, чѣмъ спастись отъ нея
и отъ другихъ повальныхъ болѣзней. На-
ставление народное и общедоступное. Д-ра
П. А. Ильинскаго. изд. редакціи „Врачеб-
Вѣдомостей“, С. П. Б. 1879 г., որ յըն-
թացս 37 օրուան՝ երեք անգամ
տապադրուել է և հրատարա-
կուել, և ո՛րքան օրինակներ...:
Ա՛հա՛ որը կարդալուն պէս՝ բոլո-
րովին համոզուեցինք, որ թարգ-
մանելով այս տետրակը Հայ-
կական բարբառ՝ բաւականա-
չափ օգնութիւն հասցրած կ'լի-
նինք մեր իրաւատէր հասարա-
կութեան. ուստի, սկսեցինք իս-
կոյն թարգմանել. հաւատարիմ
մնալով բոլորովին նուրբ հարա-

զատութեան ըստ մեր կարեացր: Ահա՛ այս դիտաւորութեամբ՝ նուիրելով ի բոլոր սրտէ սիրեցեալ Հայկական հասարակութեան, յուսամք որ և նքրա սիրով պիտի ընկալնուն:

Լաւ կ'լինէր, որ մեր բոլոր գասակարգի անձինք՝ մեր անգրագէտ եղբայրների և քոյրերի մէջ՝ նեղութիւն յանձն առնէին անհրաժեշտաբար կարգաւ ևս հասնացնել այս փոքրիկ տետրակը:

Ա. Ս. ԳՐԱՒԱՄԻՐԱՆՑ:

Երևան

1879 թ.—

ի 16 Մարտի:

ԻՆՉ ԲԱՆ Է ԺԱՆՏԱԽՏԸ

ԲՆՉ ԲԱՆՈՎ ԿԱՐԵՆԻ Է ՓՐԿՈՒՆԷԼ
ՆՈՐԱՆԻՑ
ԵՒ ԵՅԼ ՏԱՐԱՓՈՒՄԻԿ ՑԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ:

Այցելում են մեզ այժմ զանազան տարափոփիկ հրատազնապ տենդեր¹⁾, ջերմախտաւթիւններ²⁾, ծաղիկներ, վարդախտներ³⁾: Ներգործեցին նրանք զեռ ճատ օրերս. անց տեղ ներգործում են և այժմ այնպէս՝ որ դժուար է լինում ժողովրդին. կորցնելով հարիւրաւոր մարդիկ այսպիսի տարափոփիկ հիւանդութիւններից: Մեր աչքի առաջ, և մեր յիշողութեամբն՝ անցան էր-

(1) Горячка, - Էրցք, տարցոց, Շաքութիւն:

Մանկական Քարմաշիւն:

(2) Лихорадка, - քաղ, դոցոց: Մ. Թ.

(3) Корь, - Կարմուկ: Մ. Թ.

կաւ խօյնբաներ. փչացնելով բաւականա-
 չափ շատ մարդիկ: Բայց շատ ժամանակ է
 արդէն որ չենք տեսել սոսկալի ժանտախա-
 էամ ժանտամահ, այս ,,զարհուրելի՛ մար-
 դոյ մտրակին“, ինչպէս անուանում են
 ժանտախտին տեսնող մարդիկները տարա-
 վոխիկ մահտարածամից անցեալ ժամա-
 նակներում: Համարեա հարիւր տարի ան-
 ցել է այն միջոցից՝ ինչպէս այս սարսա-
 փելի տկարութիւնը, մերկացրեց Ռուսաց
 շատ քաղաքներ և գիւղեր. ՚ի թիւս որոց
 և Մոսքուա⁴⁾: Անցաւ յիսուն տարի,

(4) Այս դժգոհ զլիծիարի ցաւը, եղև և 1797 թ.
 Վրաստանում, ուր չափազանց սոսիալի հարուած
 առեց . . . : Փոքր միջոցից յիս՝ այնտեղից օտար-
 ծելով իւր ճիւղը, եկաւ ներգործեց և Հայաս-
 տանում: ուր մեր Ս. Լժվիածնում բոյն դրեց. որտեղ
 մեան քանի մե ակնանուր եղիսկուպոսը և վարդա-
 պետը. իսկ յետոյ Վաղարշապատ և այլ հողմեր . . . :
 Տես ,,Кавказская Старина“ № 3 годъ 1, Январь,
 1873 г. стр. 60. Тифлисъ. Գործ արժանայէշատակ

երբ վերջին անգամ ժանտախտը⁵⁾, դը-
 ժընդակութիւն զործեց Ռուսաց զօրաց
 մէջ և նոյնպէս Ռուսաստանի քանի վե-
 տեղերը⁶⁾: Այն ժամանակից մնացին
 միայն դառնութեան և ձախորդութեան
 յիշատակը. որի մէջ կործանուեցին մեր
 հայերը և պապերը, այս զարհուրելի
 ժանտաբեր հողմածանտից. անուանելով՝

Մանուէլ վարդապետի կիւմուշխանեցոյ, ուր կա՞ն
 շատ հետաքրքրե պատմութիւնք: Ծ. Թ.

(5) Чума. - ժանտախտ. սե մահ. մեծ մահ. մահ-
 տարածամ: Ծ. Թ.

(6) Եղև դժնդակն այս ժանտախտ՝ կրկին Հայաս-
 տանում 1830 թ. որի մասին լուսահոգի ծնող Հայրս՝
 գրել է իւր ,,Նեմեցիլուց, Հարսանեաց և Ծնեղոյ՝
 վերնագրով մատնանի մէջ պատկէս, ՚ի 1830 ամի
 Ապրիլի 5 ին վանն մեր մեղաց, ՚ի հէքն Աստուած
 բարկացաւ, եղև մեծ մահտարածամ, - մեծ մահ, շատ
 մարդիկ կոտորուեցին. և շատ դռներ փակուեցին:
 և շատ էլ՝ առանց քահանայի թողեցին: Ահա՛ այս-
 պէս տեւց քանի մի ամիս շարունակ: Ծ. Թ.

և ժանտախտով մահ մարդկանց մէջ, և սև մահով, և ս և ժանտամահով:


Բայց ահա՛, անցեալ տարուայ վերջում՝ Ատորախանից տեղեկութիւն եկաւ, որ այնտեղ Վեդլեանկայ անունով մի դիւզի մէջ՝ սկսել են շատ մարդիկ հիւանդանալ, իսկ յետոյ և մեռնել. տկարանալ ցաւով՝ չէ՛ նմանում ա՞յն հիւանդութեան՝ որը մեզ առհասարակ ներգործում է, և մեռնել ա՞յնպէ՞՜ որ ամէ՛ն տկարացող չկարողացաւ առողջանալ: այլ կորաւ արագութեամբ՝ հիւանդութեան վրայ երկրորդ, երրորդ օրը: Ուղարկուած էին այնտեղ բժիշկներ, և տեսնելով, ի՞նչպէս, և ի՞նչ բանով են տկարանում մարդիկ՝ նոքա վճռեցին, որ ԵՐԵՒԵՅԱԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՁ ԺԱՆՏԱԽՏ. և այս զարհուրելի լուրը արագութեամբ տարածուեց ո՞չ միայն Ռուսաստանի բոլոր կողմերը՝ այլ և բոլոր աշխարհը, ու շփոթեց բոլորին . . . :

Այո՛: Եւ պէ՛տքէ դորանից շփոթուել...: Երեւի՛, դեռ չէ եղել սարսափելի ժանտախտից ժողովրդական թշուառութիւն: Կա՛ր ժամանակ, երբ այս տկարութիւնից ամայացան ամենարագմամարդ քաղաքներ. ե՛րբ բոլոր բնակիչքը՝ արդարեւ զարհուրանքից և յուսահատութիւնից ցնդուեց. երբ երևեցաւ՝ որ ահա՛, ահա՛ ժանտախտը կը կործանէ բոլոր մարդկանց մինչև վերջին մնացորդը . . . : Այս երկիւղալի ահարկու ժամանակում, ժողովուրդը պահեց իւր յիշողութիւնը և հաղորդելով հասցրեց նրանց վերայ խօսակցութիւնը մէկը միւսին: Եւ ի՞նչ է զարմանալին, որ ժանտախտի մասին ամենափոքր լուրը՝ յառաջ է բերում ամբողջ ժողովրդին զարհուրանքների և շփոթութիւնների մէջ: Ահա՛ ինչպէս են պատմում այն ժամանակների մասին՝ ժանտամահի զարհուրանքներ տեսնող մարդիկը . . . :

,, 1,000 մարդից աւելի փրկուեցին
 ,, նաւերի վերայ, և փախչում էին ժան-
 ,, տախտապատ կողմերից: Փրկուածներէց
 ,, հազիւ թէ առողջացան տասն մարդ:
 ,, Հիւանդութիւնը սկսուեց ուժեղ ծակող
 ,, ցաւերով: որից յետոյ հետեւեց սաստիկ
 ,, դող-սրսրթոց. իսկ յետոյ երեւցին շատ
 ,, պինդ ուռոյցք մկանունքի տակը և երա-
 ,, նաց քունջերի մէջ: Նրանից յետոյ բա-
 ,, ցուեց նեխեալ տենդային տկարութիւն:
 ,, Սորա հետ միաւորուեցաւ տկարից դար-
 ,, շահոտութիւն. ուրիշներում՝ երեւցաւ
 ,, արիւնոտ բղամ: Մահը հասնում էր
 ,, վրայ առաջին, երկրորդ՝ ամենից շատ
 ,, վըսց երրորդ օրը հիւանդութեան: Ինչ
 ,, տեղ էլ որ կանգնում էին նաւերը, ա-
 ,, մենայն տեղ արագութեամբ մեռնում
 ,, էին այն բոլորը՝ որոնք մօտենում էին
 ,, նորանով եկած ճանապարհորդներին: Նը-
 ,, բանք բերեցին իւրեանց հետ մահացնող

,, ցայտմուռք. իսկ ամեն տեղ ուր խօսքի
 ,, և շնչառութեան զանազան հոգեւոր մա-
 ,, հացութիւնը: Եւ ինչպէս զարհուրանք
 ,, տարածուեց ամենայն տեղ ուր մը-
 ,, տաւ այդ ցարը: Եւ որից թողաց հի-
 ,,ւանդը պարկած էր միայն իւր տանջան-
 ,, քով: Ազգականները վախենում էին մօ-
 ,, տենալ նորան. բժիշկը և քահանայն
 ,, զարհուրում էին մտնել նրա բնակարա-
 ,, նը: Լացով և վախ տալով, սրտները
 ,, պատռած՝ կանչում էին երկխայքը իր-
 ,, անց ծնողացն, իսկ հայերը և մայրերը
 ,, աղերանցն և աղջկերանց. մի ամուսինը
 ,, միւսին: Բայց ի գոհ: Մինչև անգամ և
 ,, դիակներին ազգականք մօտենում էին
 ,, միմիայն նորա համար՝ որ ոչ մէկը չէր
 ,, համաձայնում կատարել վերջին պարտա-
 ,,ւարութիւնը գոնէ դրամով: Այն փողերի
 ,, ձայնը, ոչ զանդակահարութիւնը, ոչ
 ,, եկեղեցական թաղման հանդէսը, բնաւ

31845



,, չկարողացաւ ժողովել ազգականներին և
 ,, ծանօթներին թաղման ծխակատարու-
 ,, թեան վերայ: Ամենանշանաւոր և գե-
 ,, րազանց անձինքների մեռած մարմնու-
 ,, ները թափած էին փողոցներում: ,,

Մարդոյս սիրտը զարհուրանքից գողում
 է, երբ կարդում է սև ժաշի մասին, - ժան-
 տաբեր ժանտի մասին. որոնցից փչացան
 հազարաւոր մարդիկ, փոքրից մինչև մեծն.
 Իսկ մի քանի քաղաքներում բնաջինջ եղան
 բոլոր բնակիչքը՝ սկսեալ մինչև Վերջին
 մնացորդը, կամ մնացին մէկ երկու մարդ՝
 որ կողպեն դուռը և պտտմեն բնակչաց
 կորուստը:

Եւ յիրաւի, որ ժանտախտն է մէկ ա-
 մենազարհուրելի և ամենամահաբեր ՀՐԱ-
 ՏԱԳՆԱՊ ՏԵՆԴԱՅԻՆ տկարութիւն կամ ջեր-
 մախտութիւն, սպանող շուտով և սպա-
 նող համարեա թէ բոլոր հիւանդացածնե-
 րին . . . : Նթէ՛ մեր ծանօթներից վար-

21812

դահիւանդի ⁷⁾, ջերմախտութիւնից մեռ-
 նում է հարիւր հիւանդացածներից՝ ամե-
 նաշատը քան, երեսուն մարդ, եթէ՛ խօ-
 լերայից փչանայ հարիւր հիւանդներից
 քառասուն, յիսուն մարդ՝ այս ժանտախ-
 տից մեռան իննսուն կամ հինգ և բոլոր
 հիւանդացածները: Նոյն իսկ Աեռլանդայի
 մէջ, և ուրիշ վեց գիւղերում՝ բոլոր հի-
 ւանդացածներից առողջացել են միայն եր-
 կուսը: Յաւերանալով ժանտախտը սաստ-
 կութեամբ և ընդարձակութեամբ տարա-
 ծուում է, այն է՝ կոտորում է շատերին.
 իսկ երբեմն նա կարծես թէ, դադարում է
 ո՛ր և իցէ տեղում. տկարներ՝ կարծես թէ ար-
 դէն չկան: Բոլորը հանդատացան, և մտածում
 են՝ որ ահա՛ վերջապէս ազատուեցին այս-
 պիսի տառապանքից. բայց տեսնում են յան-
 կարծնորից հիւանդացան շատերը. և դար-

(7) Тифъ, Тифузь, Тифознак.— Ծորայ:

ձեռք ամենաչար և ընդարձակագոյն փռուեցաւ արդէտալի վտանգ . . . :

Հին ժամանակներում մարդիկ, չիմանալով՝ ի՞նչ ձեռնարկել, եթէ երևում էր ժանտախտ, կորցնում էին իրանց վերջին բանականութիւնը և դարհուրանքի մէջ կորչում էին հազարներով: Արեւի՞ է արդեօք մտածել, որ և այժմ՝ այնքան ոտկալի է ժանտախտը, ինչպէս եղև նա անցեալ ժամանակներում:

Ուսեալ մարդիկն ասումեն, որ այժմ անկարելի է արդէն սպասել այնպիսի զարհուրելի տարափոխիկ աւերում և ժանտամահ, ինչպէս կային բռնաջ: Ինչո՞ւ համար այսպէս:—

Նորա համար, որ այն ժամանակից սկսեալ ինչպէս կային այդ մահատարածները, շատերը փոխուեցին մեր կենաց մէջ. շատ բաներ գնում են արդէն ո՛չ այնպէս՝ ինչպէս գնում էր մի ժամանակ . . . :

Մարդիկ եղան խելօք և զգոյշ, փոքր ինչ շատ յաւերացնում էին աշխատութիւն որ թէ իւրեանց անձնական և թէ բոլոր հասարակութեան առողջութիւնն պահէ: Ինչ կերպ սկսումենք հասկանալ, ինչպէս լաւ պահպանուել զանազան անկող հիւրերից, — հրատաղնապ տենդի, խօլերայի և ժանտախտի նմաններից, եթէ դարձեալ և բոլոր ժողովուրդն այնպէս չէ՝ գո՛նէ արդէն չկայ այնպիսի տարափոխիկ թանճրամտութիւն, որը կար անցեալ ժամանակներում:

Եւ այժմ տեղ տեղ ժանտախտը կարելի է որ արտափելի է բայց ընդհանրապէս այն մեղ բալորիս՝ չէ երևում այնպէս վախենալ, ինչպէս մեր նախնիքներին:

Մենք այնու ամենայնիւ դիտենք, որ աւելի և աւելի միջոց ունենք, որպէս զի պահենք մեզ Արեւել քից եկող մեր վերայ սարսափելի թշուառութիւնից: Մենք դի-

անկը, և մեր անձնական փորձառութեամբ
արդէն իմացանք, որ ամենից առաջ զա-
նազան նախազգուշութիւններ անելով՝
մենք կարող ենք եթէ ո՛չ բոլորովին փախ-
չել զարհուրելի թշնամուց՝ գո՛նէ յաղթել
նրան յարմար ժամանակում և փոքր կո-
րստի հետ, փոքր զօհերով . . . : Մեր
կռիւր զանազան ջերմախտութեանց և
ճաղկի հետ, երբե՛ն նաև, հաւատացէ՛ք
որ փոքր զարհուրելի չէ քան զժանտախտը.
որ աւարտուումէ փառաւորապէս յաղթու-
թեամբ և յաջողութեամբ: Այս և պար-
տաւոր է տալ մեզ յոյս՝ որ յաղթութիւն
անել ժանտախտի հետ՝ կարելի է, եթէ
միայն չենք ընկնել վհատութեան և յու-
սահատութեան մէջ, եթէ չենք հպտոակիլ
ընդհանուր զարհուրանքին. եթէ ձեռքներըս
ճակելով՝ չնկննք թշուառութեան ա-
ռաջ. և եթէ կուրի մէջ նրա հետ, կը-
կոչնք մեր բոլոր ոյժը . . . : Զարհու-

րանքը և շփոթմունքը՝ վա՛տ օգնականներ
են և վատ զէնքեր պատերազմի մէջ. նրանց
հետ չես սպասիլ յաղթութեան, այլ ան-
կասկած բոլորովին յաղթուած կլինես:

Ո՛չ յուսահատութիւն, և ո՛չ ընդհանուր
երկիւղ պէտքէ լինի մեր մէջ. այլ հաւատ
իւր ոյժի մէջ. հնարքի գիտութիւն, ո-
րոնցով կարող ենք ընդդիմանալ թշնամու
հետ, և ամէ՛ն ժամանակ նրանց հաստա-
տուն դորձածութիւն գործի մէջ:

Ի՞նչ են արդեօք այս հնարները, որոնք
մեզ չէ հարկաւոր մոռանալ և որոնցով
անպատճառ հարկաւոր է օգուտ քաղել.
և օգուտ քաղել իւր ժամանակին. առանց
որ և իցէ զանցառութեան, լիակատար
ընդունելութեամբ. առանց ո՛ր և իցէ երկ-
չոտութեան:

Առաջ, քան թէ խօսել նրանց վերայ.
պէտքէ տան՝ նոյն իսկ տկարութեան կամ
նորա յայտնուած սաստիկ ուժգնութեամբ

Հիւանդութեանց համար, որք հասկանալի է ամեն մէկին:

Ահա՛ ինչպէս է պատմում հիւանդութեան մասին մի բժիշկ, որ տեսել էր տրկարներ Վեռլանկայի մէջ: „Նոյն իսկ
„ սկզբում յայտնուեցաւ տկարացածների
„ մէջ ամենախիստ զլխացաւ ճակատում
„ և քներակներում. ցաւը անդամների մէջ՝
„ կա՛ ճատեւ էր և անուժեղ բայց կար և դող
„ սրսբթոց. որից յետոյ հետեւեց երկարատե
„ սաստիկ երեսը և աչքերը սլորող ջերմու-
„ թիւն. փորք ուռած, սրտի և երակների
„ դարձը արագ և յաճախակի: Այսպէս
„ շարունակուեց 2-3 օր. իսկ յետոյ՝ մի
„ կամ երկու օրու մէջ, չարչարանքը
„ սաստկացաւ, երևեցաւ ցնորք, անքնու-
„ թիւն, անհանգստութիւն, ամենատա-
„ տիկ ջերմութիւն, լեզուն չորացաւ,
„ թխակարմրեցաւ, տկարները սպականում
„ էին իրանց տակըն, այդ սպականու-

„ թիւն էր մոյլ մոխրագոյն. և մահն հի-
„ տեւեց արագութեամբ մկանանց կծկուե-
„ լով, ու շաթափութեան մէջ, յոյժ արագ-
„ գութեամբ ուժից քնկնելու ժամանակ:
„ Սեռելների դիակները խկոյն փետանում
„ էին. դիակները բժերը երևեցան 12 և
„ աւելի ժամից յետոյ: Իսկ ուրիշ պատահ-
„ ժուէքների մէջ՝ հիւանդութեան սաստիկ
„ ուշագնացութիւնը, լինումէր խստագոյն:
„ Ինչ հիւանդ որ զգում էր իրան գեւ-
„ փոքր՝ ի շատէ միջակ՝ բայց յանկարծ նո-
„ բանում երևում էր ամենատաատիկ սրտի
„ դարկ, ժխոր՝, զլխի պոռոյտ, կրծքի
„ ճլն ու մն, թքում էր արիւն, փսխում
„ էր միմիայն լոկ սոսկ արիւն, երեսի գոյ-
„ նը գեղնած, աչքերը պոտոր խոր գնա-
„ ցած, սլորակաւ աճներից յետոյ՝ 3, 4 և
„ աւելի ժամի միջոցի մէջ, տկարը գտնվում
„ էր վերջին անկարողութեան մէջ. որից
„ յետոյ՝ վրայ էր հասնում, սաստիկ ջեր-

,, մութիւն, թմբբութիւն, ցնորք, և այս
 ,, բոլոր երևոյթիւններին միաւորուում էր
 ,, մեյդ բծեր մարմնի վրայ, մեծութեամբ
 ,, կորկի հատիկից՝ մինչև 10 կուպեկանոց, և
 ,, աւելի. հիւանդները դուրս էին հանում
 ,, իրանցից մի ուրիշ տեսակ նեխուած հոտ,
 ,, և չափազանց կարողութիւնից ընկներու
 ,, ժամանակ մահը հետևում էր թմբբու-
 ,, թեան մէջ: Ի՞նչպէս ինչ փետանում,
 ,, այլ նեխուում էին 2-3 ժամի մէջ: ,,
 ,, Ուրիշներում երևում էին սևոյցք
 ,, խոնուկի (մասնք) և երանաց քունջերի
 մէջ, ևս և մկանունքի տակը: ,,

Հիւանդութեան արկածները նշանակում
 է՝ որ զարհուրելի է, և նրանցով արդէն ե-
 րևում է, որ ի՛նչպէս դժուար է ընդ-
 դիմանալ տկարութեան հետ, եթէ նա յայտ-
 նուել է մարդը մէջ: Ուրեմն պէ տքէ, զլիա-
 ւորապէս աւելացնել նրա մասին հոգացո-
 ղութիւն, որպէս զի, նախապուշացնենք

մեզ տկարութիւնից, կորցնենք կանխաւ
 նայն իսկ տարափոխիկ ախտերի զօրութիւնը,
 և տանք մեր մարմնոյն ոյժ և կարողութիւն,
 յաղթել և կործանել նորան . . . և իսկ
 ինչո՞վ կարողենք դորան հասնել: Ի՞նչ տե-
 սակ հնարներով: Որտեղ նրանց գաննէք:

Եւ տ տեսակ զոյցներ է լինում զա-
 նազան հնարքների մասին, իբր թէ նա-
 խապաշտպանողները ժանտախտից, ինչպէս
 էր, թուղթ բացանելը, նշանները, հոգա-
 հարելը, մութն տալը և միւսները, մին-
 չև անգամ չափազանց անտեղի անապաշտու-
 թիւնը. բայց այս բոլորը իրաւ որ, ո՛րի՛նչ
 չեն նշանակում և չեն կարող ազատել մեզ
 անդաթ ցաւերից:

Բոլոր ուսեալ և փորձառու անձիւքը՝
 համաձայն և բոլորովին ճշմարիտ ասում
 են, որ ՄԻՄԻԱՅՆ ԵՒ ԶՕՐԵՂ, հնարքն է,
 մրցիլու և յաղթելու համար ժանտախտի
 և միւս տարափոխիկ տկարութիւնների հետ՝

կգտնենք, եթէ կամենանք իմանալ թէ ի՞նչ բանից են փոխւում տարափոխիկ ախտերը և ինչից են գրաւուում, և եթէ հոգացողութիւն կանենք, յետոյ կլինի այնպէս, որպէս զի, և ձայն անգամ չլսուի որ և իցէ տարափոխիկ ախտերի մասին:

Մենք գիտենք արդէն, որ ժանտախտը՝ նոյնպէս և միւս տարափոխիկ հիւանդութիւնները, — խօշեր, նեխեալ փողացա-⁸⁾, և ջնրմախտութիւն, երևում են և տարածուում զլիսաւորայէս՝ այն տեղերում ժարգկանց մէջ, ուր ժաղովադի առողջութեան համար պակասում են նոյն իսկ խաւականք, և ամենահարկաւորները որք են՝ — ՄԱՔՈՒՐ ՕԿ, ԼԱԻ ԶՈՒՐ, ՅԱՐՄԱՐ ԿԵՐԱԿՈՒՐ, ԼՔ ՄԱՐԻԿԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՄԱՏ ԱՇԻԱՏԱՆԻ: Որտեղ ժարգիկ բնակուում են կեղտոս — անմաքուր, խոնաւ — թաց, օդով

կախարակ զանաւորայէսը և այլն

(8) մնացած փողացաւութիւն. բնացաւ: տուս յիւսիս

փչացած բնակոււթիւններում, նեղ աների կամ բնակարանների մէջ, ուր կենում են չափազանց նեղուածքով, ուր նոյն իսկ բնակութիւնքը դտնուում են ճահիճներին՝ կամ աղտոտած ամեն տեսակ անմաքուր տեղերի վերայ, ուր մարդիկ կերակրուում են վատ՝ կամ ճնշուած անկարող ծառայութեամբ, ուր արևու լոյսը սակաւ և փոքր է թափացում բնակարանի մէջ, ուր բաւականանում են մաքուր և լաւ ջրերի տեղ՝ աղբային (թրվք, - թրբային) կամ ճահճային, — այնտեղ՝ ԼԻԱԿԱՏԱՐ և Ի ՅՈՐԴԱՌԱՏ ԸՆԴԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ է բոլոր այս ժանտաբեր ախտերի, իսկ յետոյ՝ և տարափոխիկ ակարութիւնների. — ԿԱՐԳԱՀԻՒԱՆԻՈՒԹԻՒՆԻ, ՆԵՒԵԱԼ ՓՈՂԱՅԱԽԻ, ԽՕԼԵՐԱՅԻ և Ի ՎԱՆՏԱԽՏԻ: Արժանի է այստեղ տարափոխիկ ախտերը միայն ոչնչացնեն մի այնպիսի մարդոյ՝ որպէս զի տեղ բռնեն, որտեղեց արդէն տարափոխիկ ախտերը փչայնուս

են ամեն մէկին. ով միայն ընկնումէ ժանտախտապատ բնակութեան մէջ: Թէ՛ մօտենաս, և թէ՛ չմօտենաս տկարին՝ միւկնոյն է, այլ այնու ամենայնիւ կհիւանդանաս այնպիսի իսկ հիւանդութեամբ, իսկ յետոյ և կարողես դու այլոց ապականել ախտերով: Եւ այս ամեն ժամանակ և ամեն տեղ:

Ահա՛ և Վետլանկայ՝ մէջ՝ բնակիչները բնակուում էին թշուառ, աղտոտ. կենում էին հազիւ թէ անխոնաւ ճահճի վերայ, ամենավատ, աղտոտ խրճրթների մէջ, նշանակում է՝ շունչ էին քաշում փշացած օդով. խմում էին ջուր՝ չընտրելով լաւը, ի՞նչ հոտ է փչում նա. մշակում էին չըհանգստացնելով ձեռքերը, և իրանց առողջութեան մասին փոքր հոգացողութիւն ունէին . . . : Մտաւ նրանց մօտ ժանտախտային տարափոխիկ ախտը, և բոլորը նրանք համարեա ընդհանրապէս տկարացան. իսկ բաւականին շատերը նը-

բանցից և բոլորովին ոչնչացան . . . : Նշանակում է՝ մենք դիտենք, որ ժանտախտը տարածուում է գլխաւորապէս այն մարդկանց մէջ՝ որոնք բնակուող են վատ, թշուառ, աղտոտ, սոված, ցուրտ. որոնք անհոգաբար և անտարբերաբար են նաշում իրանց առողջութեանց վերայ, հրնալքի պակասութեան կողմանէ կամ անգրագիտութեան մասին. բայց գիտենք նոյնպէս և այն՝ որ ժանտախտը, նոյնպէս և միւս տարափոխիկ տկարութիւնքը՝ փոքրագոյն կործանիչ են և փոքրագոյն զօրեղ ուր մարդիկ ապրում են լաւ: Այնպէս որ, մարդիկ չորացնելով ճահճը, որոնց վերայ ապրում են, մաքրելով բոլոր շուրջը իւրեանց՝ բոլորովին ազատուել էին մինչև այն ժամանակը մշտական և զարհուրեցի հիւրից . . . : Բացի նորանից՝ ուր որ տկարացած մարդիկը մնացել էին իւրեանց ժանտախտապատ բնակութիւնների մէջ,

որոնք շարունակաբար լինում էին այնպիսի
 և սղոտտ և անստող ջ, մեռնում էին բոլորը
 ընդհանրապէս. ինչպէս շատ հեռու
 չէ, երկու տարի առաջ՝ եղև մի գիւղա-
 քաղաքում, — Ռաշտի մէջ: Ա յստեղ նոյն-
 պէս կա՛ր ժանտախտ: Բնակիչներէց մի
 քանիսը, որք սովորած էին դառն փոր-
 ձերով՝ լա՛ւ համարեցին փակել գիւղա-
 քաղաք՝ ց սարերի մէջ, այն է այնտեղ՝ ուր
 որ մաքուր է օդը, հողը և ջուրը, — և
 մնացին առողջ, և անվնաս: Նորա-
 նից յետոյ յայտնի է, որ ամենայնաճակ
 ակարանում են ճնշուած և նուազած
 մարդիկ: Ուրե՛մն, ժանտախտը և միւս
 տարափոխիկ տկարութիւնքը իրանք ցոյց
 են տալիս, ինչպէս նրանց հետ մարանչիլ
 և ինչպէս նոցա ոչնչացնել:

1) Ամենից առաջ դառնանք դէպի մեր
 ԵՆՁԱՌՈՒԹԻՒՆԸ, որով կ'նշանակէ՛ մտածո՛ւմ
 ենք օդի մասին, որով շունչ ենք

քաշում, առանց որոյ չենք կարող ապրիլ,
 և որը ամեն տեղ մեզ շրջապատած է:
 Կա՛ւ յայտնի է արդէն, որ տարափոխիկ
 տկտերը առհասարակ չեն սիրում մաքուր
 օդը և մինչև անգամ ոչնչանում են նրանից.
 այլ ընդհակառակը աւերուած — փչացած
 օդի մէջ նոքա չափազանց ընդարձակուու-
 են: Ապա ուրե՛մն, ամեն մէկին հարկաւոր է
 հոգ տանել նրա մասին, որպէս զի, շունչ
 քաշել ամեն բանից առաւել՝ մաքուր օդով
 իսկ խանդարուածը կորցնենք բնակութիւ-
 նից դուրս. այլ սորա համար բաց անենք
 լուսամուտը, դուռը, վառարանը և օդա-
 փոխը . . . : Ծշմարիտ է, մշակող մար-
 դը համարեա ամբողջ օրը անցէ կացնում
 օդի մէջ. և նորա համար հասարակ մար-
 դիկը մտածում են՝ որ նրանք պատրաստի օդ
 ունեն. ուստի այլ ևս իւրեանց խրձիթը հողմով
 մաքրելու մասին և չեն էլ խորհուրդ ա-
 նում: Բայց նրանց հարկաւոր է յիշել՝ որ

խրճիթը չէ՛ մնում դարտակ, առաւելապէս ձմեռը: Ա յնտեղ բնակուում են իրանց կանայքը, իրանց երեխայքը, և նո՛յն իսկ իրանք՝ իմիասին ընտանեկան թռչունների և անասունների հետ, վերադառնում են այնտեղ. իսկ գիշերը, և բոլորը միատեղ անչափ ապականում են օդը: Երողելով փոխելով և մաքրելով յաճախապէս օրը մեր բնակութիւնների՝ մենք կարողենք շնչել և՛ ազատ, և՛ թեթև. նշանակում է՛ և մենք լինում ենք առողջ:

Եւ այսպէս՝ 1) ՊԱՀՅՅԷ՛Ք ՄԱՔՈՒՐ ՁԵՐ ԽՐՃԻԹԸ, ԲՆԱԿԱՐԱՆԸ, ՁԵՐ ԶՕՐԱՆՈՅԸ, ԱՌՀԱՍԱՐԱԿ ՁԵՐ ՏՆԵՐԸ, ՅԱՃԱԽԱԿԻ ԹՈՂԷ՛Ք ՆՐԱՆՑ ՄԷՁ ԱԵԼԻ ՄԱՔՈՒՐ ՕԻ. ԲԱՅԱՆԵԼՈՎ ԼՈՒՍԱՄՈՒՏԸ ԵՒ ԳՈՒՈԸ ՄԻ ԵՒ ՆՈՅՆ ՄԻՋՈՅՈՒՄ, ԵՒ ԱՆԵԼՈՎ ԱՅՍ Ո՛Չ ՄԻ ԱՆԳԱՄ ՕՐՈՒԱՅ ՄԷՁ...: Ընդ սմին զգուշանալ մրտելոց՝ որ յո՛յժ կարելի է և հեշտ է. — իսկ ապականուած օդից արդէն զգու-

շանալ դժուար է: ՏԱՆՏԱԿԱՄԱԾԸ 9) ՈՉ ՄԻԱՅՆ ՍՐԲԵԼ՝ ԱՅԼ ԱՆՍԼՈՐԳ ԶԻ ԼԻՆԻ, ԵՒ ԼՈՒԱՆՈՒ, ՆՈՅՆՊԵՍ ԵՒ ՊԱՏԵՐԸ՝ ՉԷ ԿԱՐԵԼԻ ԹՈՂՆԵԼ ՄԻ ՉԱՏԿԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԻԻՍԸ ԱՆՄԱՔՈՒՐ ԵՒ ԱՆԼՈՒԱՅԱԾ: ՆԱՅՅՅԷ՛Ք ԵՒ ՀԱՐԿԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՈՏԱՅ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՏԵՂԵՐԸ, ԵՒ ԲԱԿԵՐԸ, ՊԱՀՅՅԷ՛Ք ՆՈՅԱ ՄԱՔՐՈՒԹԵԱՄԲ ԱՌԱԵԼԱՊԵՍ ՀԱՐԿԱՌՈՐՈՒԹԵԱՆ ՏԵՂԸ: Մարդկային ոտայ ճանապարհի հարկաւորութիւնները, թրիքը, և միւս կոշտազան անմաքրութիւնները, որոնք նեխուելով՝ չափազանց ապականում են օդը:

2) Միւս կարևոր բանն է մարդոյս առողջութեան համար՝ — նորա կերակուրը և խմելքը: Ո՛վ որ անզգոյշ է կերակրուում, ո՛վ որ յաճախապէս, ինչպէս ասում են, , , ազամը դնում է գընդի վերայ, , ,

9) ПОЛЫ, — տակտակած գետինը. նոյնպէս պէ՛տք է ընդունել և հազարակ գետինները. Ե. Թ.

նա լինում է թոյլ և նուազ: Իսկ թոյլ մարդին կըխորանակէ և ոչ այնպէս զարհուրելի տկարութիւնը, ինչպէս ժամատասոր: ՀՈԳԱՅՈՂՈՒԹԻՒՆԵՆ ԱՐԷՔ, ՈՐՊԷՍ ՁԻ ՀԱՅՐ ԼԱՔ ԹԻԱԾ — ԵՊԱԾ ԼԻՆԻ, ՍԻՍԵՈՆ, ԲԱՇՈՒԿԻՆ, ԿԱՂԱՄԲԱԹԱՆԸ ԵՒ ՈՒՐԻՇ ՈՒՏԵԼԻՐԸ ՆՈՐ ԼԻՆԵՆ. ԵՄԷՔ ԶՈՒՐ ԱՆՊԱՏՃԱՌՊԱՐՁ — ՄԱՔՈՒՐԸ, ԵՒ ԶԳՈՒՇԱՅԷՔ ԱՌԱԻՆԼԱՊԷՍ ԶՐՀՈՐՆԵՐԻՑ ԵՒ ԳԵՏԵՐԻՑ. ԵՐԷՔ ԶՐՀՈՐՆԵՐԸ ՀԵՌՈՒ ՉԵՆ ԳՏՆՎՈՒՄ ԲՅԱԿԻՑ ԵՒ ՀԱՐԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՏԵՂԻՑ. ԻՍԿ ԳԵՏԵՐԸ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԱՂՏԵՂՈՒԹԻՒՆԻՑ:

3) Կարողութիւնից բարձր չափազանց աշխատութիւնը, առանց բաւականաչափ հանգստութեան՝ նոյնպէս ճնշում է և նուազացնում մեզ. — Առ հասարակ ճնշում ձեռքի կանց վերայ յաճախապէս հանդիպում են տկարութիւններ, և յաճախապէս ապականում են նրանց տարափոխիկ հիւանդութիւնները. յատկապէս այնպէսն ինչ

պէս է ժամատասոր: Բայց հումն մարդիկ, ժանտաքեր ժանտի ժամանակ, բոլորովն թողացին իւրեանց պարագմանքը և նրանցից շատ բազմութիւն հիւանդացան և կորան: Նշանակում է և այն ժամանակի մէջ ինչպէս սաստիկ է եղել ժամատասոր: Աւրեմն մի թողէք սովորական ձեր աշխատութիւնը, բայց և մի՛ ճնշէք ձեզ ծանրութեամբ, կարողութիւնից բարձր աշխատանք: Կիրակի և հանդիսաւոր օրերը հանգստացէ՛ք, զբօսանք վայելցէ՛ք, բայց ոչ գինեաներով, այլ մարտիր օղի մէջ:

Թեպէտ և ասում են, ,, քաջութեան համար բցելը կամ խմելը աւելորդ է,,: Այս, հաւատացէ՛ք որ, ուղիղ է, եթէ

յոյժ սակաւ քցել, և ընդ նմին յաճախ
 չքցել իսկ թէ ոչ այլպիսի քաջերին՝
 որոնք չափազանց քցողներ են, որպէս հա-
 բուած՝ կծածկի ժանտաբեր ակարու թիւնը:
 Ծանր աշխատութիւնից յե-
 տոյ, կամ ուղևորութիւնից դա-
 դարելուց յետոյ աւելորդ չի լի-
 նիլ, ոյժը բարձրացնելու համար՝
 խմել մէկ օղիի գաւաթով,
 գինի կամ օղի. բայց խմել նը-
 րան և յաճախապէս՝ նշանակու-
 է, ուղղակի հրաւիրել իւր վերայ
 տկարութիւն: Անցեալ խօրհայի ժո-
 մանակ յաճախապէս տկարանում էին նը-
 րանք՝ որոնք ենթարկուեցին ընդհանրա-
 պէս հարբեցողութեան և դարչապիժու-
 թեան կեանքերին:

4) Կրկին խորհուրդ: Պահե-
 ցէք ձեր մարմինը մաքուր, յա-
 ճախապէս լուացէք ջրով ձեր
 երեսը, ձեռքերը, ոտները. լուա-
 ցէք բաղնիսում ձեր բոլոր մար-
 մինը. իսկ ամառուան միջոցում
 լողացէք: Ձեր հանդերձը, ըս-
 կսեալ շապկից մինչև կապա-
 ները կամ կիսաբըբերը՝ նոյնպէս
 անշուշտ պահեցէք մաքուր և
 իստակ. յաճախապէս փոխեցէք
 շապկիք և անդրաՎարտիկը ու
 պատուիրեցէք տան տիկնոջ
 նրանց յաճախ լուանալ, քորքը,
 կիսաբուրքը և կապէն՝ հովա-
 հարեցէք հողմի առաջ և սառ-

նամանիքում: ամառուայ միջոցին կախտուեցէք չորացնելու արևի առաջ կամ արևակէղ արէք: Ա յս ձևով եթէ յաճախասպէս հոփահարուժ կնք և չորացնում շորերը, մենք նոյն իսկ միջոցով հանում ենք նրանցից մի քանի անմաքութիւններ և տարափոխիկ ախտեր: Այլոտա բաները մի խառնէք մաքուրների հետ. մանաւանդ ոչ մի կերպով մի վերցնէք տարափոխիկ ախտերով ապականուած տանից ապրանքներ, մի քաղէք օգուտ այն ապրանքից՝ որոնք եղած են հիւանդների վերայ կամ նրանց մօտ: Եստ անգամ ժամտախ տի

տարափոխական ախտը այնպէս զորեղ է որ մինչև անգամ թափանցում է նոյն իսկ ապրանքին. ու նրանք կարող են հասցնել տարափոխիկ ախտը: Կողինքների ¹⁰⁾ մասին առհասարակ մեզանում բոլորովին հոգ չեն տանում. նոյնպէս հանդերձը, որ ցերեկը ունենում են իրանց վերայ՝ իսկ դիշերը ծառայում է սփռոցի համար: ԱՌԱԻՆԱՊԱՍ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՒՆ ԱՐԷՔ ՆՈՐԱ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆԸ. եթէ կողինքների համար զործ են ածում թաղինքներ, ճշող և միս նոցա նման բաներ, ապա՝ անհրաժեշտ է նրանց ամենայն օր հովահարել և յաճախակի արևակէղ անել ¹¹⁾ կամ փռել սառնամանիքում: Բացի սրանց՝ ապրանայ մէջ տարափոխիկ ախտերը

(10) Տեղաշար, քեկու շորեր, վերմոխ-անկողին:

(11) Սքէկ սաստիկ տաքութեան դէմ փռուել:

ոչնչացնելու համար, հարկաւոր են քանի մի հնարքներ. որոնց մասին առուած է առանձին խրատիս վերջումը:

5) Երկիւղ ունեցէք մրսելուց:
Տաքանալով աշխատանքի կամ ճանապարհորդութեան մէջ մի խմէք միանգամայն և շատ՝ սառը ջուր և առաւելապէս թրթուաջուր. մի՛ պարկէք խոնաւ և սառն հողի վերայ ամբողջ գիշերն և մինչև անգամ մի փոքրր միջոց: Եօք և քրտնած միջոցներում մի չորացնէք սառն հողմի առաջ, ձեր անձի վերայ հազած հանդերձները ընդհանրապէս հող տարէք նրա մասին,

որպէս զի ամբողջ մարմինը չըմրսի սաստիկ և միանգամայն: Պատահմամբ մրսելուս հարկաւոր է սաքացնել իրան, նոյն ժամոյն խմելով չորացրած կակղի ¹²⁾ տերեւներից, մորիի ¹³⁾ թէ յ, ¹⁴⁾ կամ տաք ծածկուելով պարկիւ: Եթէ երեւցաւ սաստիկ տկարութիւն՝ ապա՝ որքան հնարէ շուտով՝ հարկաւոր է դառնալ բժշկի օգնութեան: Որպէս զի նախազուշացնէ իրան մրսողական տկարութիւններից, մանաւանդ սառը, խոնաւ տեղերում՝ լաւ է մարմնոյ վերայ ունենալ տաք կրծակալ կամ փորակալ ¹⁵⁾. բայց պահել նրանց՝ այսու ամենայնիւ, նոյնպէս մարութ՝ ինչպէս միւս բաները . . . :

(12) Липа, Липка, — կակղի, սկիւայի, ծառ:

(13) Малина, — մալինայ:

(14) Чах, — չախ:

(15) Набрюшничать.

Բոլոր այս կանոնները՝ ամեն միեր պարտական է իմանալ և կատարել. եթէ միայն, նա չէ՛ կամենում փչանալ՝ տարափոխիկ հիւանդութիւնից: Մաքրութիւնը և խտակութիւնը մեր ձեռքի մէջ են. միայն թէ չմոռանան, որ նրանք ինչպէս կարեւոր են և փրկող. և նրանց մասին հաստատուն հոգատարութիւն անեն նոյն իսկ իրագործութեան մէջ:

Այնպիսի ժողովրդական թշուառութիւնների մէջ, ինչպէս տարափոխիկ հիւանդութիւնը՝ և մանաւանդ որպէս ժանտաբեր (ժանտախտային) հոգմածանտը, դեռ բուական չէ, ամեն մէկը իւր վերայ նայէր. այլ ոչստեղ արդէն հարկաւոր է միաւորուն բոլորը և իմիասն գործին՝ հաղորդելով բոլոր աշխարհին. այդպիսի զարհուրելի թշնամիների գէժ: Ապա թէ ոչ, եթէ մի կերպով չզղուշացան սորանից ոչ մէկը և ոչ միւսը և մոքներում

չպահեցին, կգայ թշուառութիւն այն ժամանակը բոլորի համար: Իւր ուր նորա համար, կլինի բոլորովն բաց: Որի համար ամենահարկաւոր է:

1) Ս. յԺՄէն իսկ մի առ մի նայել ՔԱՂԱՔՈՒՄ, ԳԻՒԱՔԱՂԱՔՈՒՄ ԵՒ ԳԻՂԲԻՄ: Եթէ հաւաքուած է նրանց մէջ շատ թրիք, ցելս, ապա հեռացնել նրանց հրազարակից, փողոցից և տանել բաւականին հեռու տեղ գիւղաքաղաքից և գիւղեց:

2) Նայել և ՄԱՔՐԵՆ, ՏՈՒՆԸ, ԽՐՃԻԹԸ, ԲԱՎՐ, մանաւանդ ամենաչքաւոր բնակիչների, և հայեցողութիւն կարգել նրանց համար, որպէս զե, կարելի եղածին պէս՝ նրանց մէջ բոլորը սրահուէր մաքուր:

3) Մշտական և ուշի ուշով նայել՝ ՈՒՏԵՆԵԱՅ ՊԱՇԱՐԵՂԵՆՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆՅ ՀՍՄԱՐ վաճառանոցներում, հաւասարապէս որպէս և տեղերի համար, ուր մրշակող մոլորիկ կերակրվում են. զորօրի-

նակ պանդոկների, իջևանելու բակերի համար, և չթողնել ո՛չ մի կերպով փշացած և հոտած պաշարեղեններ:

4) Նայել այն ջրհորները, առուները և գետերը՝ որոնցից խմելու համար ջուր են վերցնում: ՓԱԿՆԼ նրանցից այնպիսիները՝ որոնց մէջ ջուրը փշացած է ու նեխած հոտ է փչում, այլ թողնելով միայն այնպիսիքը՝ որոնց մէջ ջուրը կերևայ պարզ ու լուս:

5) Օգնել ընդհանուր դորութեամբ իրանց ամենաթրշուառ դրացիներին. լաւացնել որքան կարելի է նրանց կեանքը, ինչ բանով միայն կարելի լինի. — կերակրով արդեօք, թէ՛ աշխատութեամբ: Հոգացողութիւն արէք նրանց համար 'ի միասին' որպէս զև նրանց պաճառով չթողովուի տկարութիւնը և շտարածուի բոլորի վերայ:

6) Հարկաւոր չէ մտանալ՝ որ ամեն տարափոխիկ հիւանդութիւնները յաճախ կործանումեն երկչոտ և թուլասիրտ անձանց:

Իսկ պատահմամբ հիւանդութիւնը երեւալով որ և իցէ գիւղում, կամ նաև որ և իցէ մի տան մէջ՝ ամենից առաջ, առանց որ և իցէ ժամանակ կորցնելու, անպատճառ հարկաւոր է իմացումտալ այնպիսի անբաղդութեան մասին ինչպէս տեղական բժշկին կամ նորա օգնականին, նոյնպէս և կառաւարութեան կամ տեղական ատենին: Այստեղ ժամանակ կորցնելը՝ չափազանց երկիւղալի է:

Նոյն իսկ ժամանակում անփոփոխ

չարունակեցէք նայել բոլորի
համար, որոնց մասին արդէն
ասուած է. և մանաւանդ սրա-
նից յետոյ նայեցէք տան կամ
տների վերայ. որտեղ արդէն
տկար կայ, կամ ժանտախտով
հիւանդ . . . :

Այստեղ պէտքէ բո-
լոր կարողութեամբ՝ և իմաստին հոգ տա-
նել նրա համար, որպէս զի հիւանդու-
թիւնը հեռու չգնայ և չկործանէ բոլորին:
Իսկ տկարին հարկաւոր է հեռացնել
զեռ միւս բոլոր առողջներից. հոգ տա-
նել տկարի համար՝ և հայեցողութիւն
անել բոլորի մասին. նորա շուրջը թող պա-
ւան հոգալու իրանց վերայ չափազանց վատահ
փորձառու մարդկկր. որոնցից և ՊԱՀԱՆՋԵ-
ՅԷ՛Ք ՆՈՅՆ ԽՍԿ ԱՄԵՆԱՄԻՍՍ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ,
ինչպէս նոյն իսկ տկարից՝ նոյնպէս և խրճիթի

միջի բոլորից. և նոյն իսկ խրճիթներից
կամ բնակարաններից. հիւանդներին պահ-
պանողները չպէտքէ միանգամից և նոյն
ժամին դուրս զան ժանտախտապատ տե-
ղից կամ խրճիթից՝ և զնան միւս խրճի-
թը, որոնց մէջ դեռ հիւանդներ չկան:
Հիւանդի սկզբի օգնութիւնն՝ մինչև բը-
ժշկի զախն, պէտքէ պատրաստ լինել գըր-
խաւորապէս հանդստութեան մէջ պահել
զլիսացաւը. — յաճախակի փոխելով սառը
ջրից թրչած քաթանը. տրորելով ամբողջ
մարմինը մաքուր շորով կամ երեսփիչոպի
թրչած նոյնպէս սառը ջրով կամ եթէ
կայ՝ քացախով. ծարաւը կտրելու հա-
մար՝ կան սիրտը հովացնող ըմպելիքներ.
կողինքի աւելի յարմար պատրաստութիւ-
նը, պահեցողութեամբ մաքրութիւնը նոր
փոխնորդներով և օդափոխելով խրճիթը.
հաւասարապէս հանդստացնելով նորա
հոգին յուսալով մօտաւոր օգնութեան և

փրկութեան: Իսկ եթէ հիւանդի ոյժերը միանդամից ընկել են և նա թոյլ է, ապա օգնելով կարելի է նորան տալ մէկ կամ երկու քթալով զինի:

Ժանտախտից մեռնողներին պէտք է թաղել առանձին զերեզմանատան մէջ, և թաղել իսկոյն. նրանից յետոյ՝ մնացեալ բաները, հարկաւոր է նոյնպէս իսկոյն այրել: Իսկ խրճիթը անշուշտ բնակիչքը բոլորովին թողնելու են երկար ժամանակ. մինչև կառաւարութիւնից չլինի ծանուցումն կարելի՞ է արդեօք նրա մէջ ապրել, կամ անհրաժեշտ է նրան բոլորովին ԱՅՄՆԼ. հանդերձ վճարելով տան աէրերին ինչ որ արժողութիւն կունենայ:

Այնպիսի զարհուրելի ժանտաքեր հողմաժանտից՝ ինչպէս ժանտախտ մարդկանց մէջ. սկսում են և կառաւարութիւնից պահպանողական միջոցներ մեր օրէնքներիցուցմամբն: Եթէ երկեսցին տկարներ՝ ու-

րե՛մն տարափոխիկ ակտը կարելի է փոխադրուել և դէպի ուրիշը, դեռ առողջներին: Որով և արգելուում է բոլորին դուրս գալ կամ զնալ ժանտախտապատ գիւղերից կամ զիւղաքաղաքներից ուրիշ տեղ. որոնց մէջ դեռ չկայ տկարութիւն: Սակայն այնպէս ինչպէս ոչ ով չէ սիրում առհասարակ նստել տանը. և առաւելապէս ժանտախտապատ գիւղումն, ապա և պահպան են կարգում որպէս զի ոչ ով գուրս չգնայ: Բայց և օրէնքը կլինի անզօր, եթէ մենք ինքներս խիստ չենք կտտարիլ նորան: Եւ առաջին, և վերջին մեր խօսքը այսպէս է. — Եթէ մենք խիստ կ'կատարենք բոլոր ասածները խրատի մէջ. և ոչ միայն ժանտախտի պատահած միջոցը, այլ և կ'կատարենք մշտապէս. ուսուցանելով նորան մեր երեխաներին. ուրե՛մն և ժանտախտը և բոլոր միւս տարափոխիկ տկարութիւնները շնորհ չեն բերիլ մեր մօտ:

Այս բոլորով կարելի է անպօքայնել
 առաջուց թշնամուն՝ քան թէ առաջ ինք-
 ներս, ՊԱՐԿԵՆՔ ՈՍԿԻՆԵՐՈՎ: Այս կեր-
 պով, անկարելի է զարհուրանքի մէջ ընկ-
 նել փոանդի առաջ, բոլորը գնելով ճա-
 կատարի վերայ. «անելով», «դուցէ մի կերպով
 անցնումէ», «իսկ», «մեռնել» այո՛ մի և
 նոյն է կմեռնես», «Ո՛չ, հարկաւոր է ա-
 մեն ժամանակ յիշողութեան մէջ պահել,
 որ զգուշութիւնը ևս ստաւել չէ արգե-
 լում: Հողոյ պնդութեան հետ՝ գննում
 հնարքներով կրնող իմանանք թշնամուն. և
 ինչ քան որ նա գորել և զարհուրելի է լինի՝
 այնու ամենայնիւ մե՛ծ յոյս կայ նորս
 վերայ ունենալ յալթութիւն:»

Handwritten notes in Armenian script, partially obscured by a stain.

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՒ ԻՐԵՂԵՆՆԵՐԻ ՄԷՁ ՏԱ-
 ԸՍՓՈՒԻԿ ԱԻՏՏԵՐԻ ՈՉՆՉԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
 ՀՆԱՐՔ:

Եանտախտի, տարախոխիկ հրատապ-
 նապ տնեղերի, նեխեալ փողացաւի, ծաղ-
 կի և սիրիբեան ապականիչ ախտի մէջ,
 փորձառութեամբ իմացումէ, որ տարա-
 փոխիկ ախտը կարող է կպչել և՛ բնակա-
 բանների պատերին, և՛ շորերին և միւս
 բաներին: Ամեն ժամանակ նրանց լուանալ
 դժուար է. իսկ միւս իրեղենները մինչև
 անգամ և չէ կարելի լուանալ: Տարախո-
 խիկ ախտերը ոչնչացնելու համար՝ բացի
 հողմահարելու՝ դորձադրվում է և զանա-
 զան միջոցներ: Ահա՛ համարեա ամեն մէկին
 ամեն բանից առաւել յարժար՝ որը հա-
 մարեա ամենայն տեղ կարելի է գտնել:
 Բնակարանիս այնտեղ՝ ուր տեղական կա-
 ու աւարութիւնը նրանց պատրաստ ունէ:

Handwritten mark or signature.

1) Խորձթիները, խցերը, բնակութեան
 սինեակները մաքրացնելու համար՝ կարե-
 լի է գործածել, ուր խցերը սպիտակաց-
 նում են՝ նորից սպիտակացնել չբացուած
 կրով: աւելացնելով սպիտակատեղ—անգոյր
 16) (չորս մասն չբացուած կիր՝ և մի մասն
 անգոյր), իսկ որտեղ պատերը հասարակ
 են, փայտից են, այնտեղ՝ նրանց մոխրա-
 ջրով լուանալ, կամ սպիտակացնել, ինչ-
 պէս տուած է. կամ ծխել ծծմբով: Ծր-
 ծումբը հարելով պտուկի մէջ՝ թաթախել
 նրանում կապած հին շորերի կտորներ.
 իսկ նրանից յետոյ, երբ կ'անդանայ՝ պա-
 հել գործածութեան համար: Եւ երբ որ
 հարկաւոր է ծխել՝ այն ժամանակը թո՛ղ
 խորձթից բոլորը դուրս գան, և՛ մարդիկը,
 և՛ կենդանիները. թողնելով շորերը, ու
 քոնց նայնպէս հարկաւոր է ծուխ տալ, ու

16) Вѣлиѣ,

փակել լուսամուտը և բոլոր լուսանցքը.
 զնել հողէ հարցում այնպէս՝ որպէս զե
 հրդէհ չլինի. վառել նրա մէջ ծծմբոտ
 հին շորերի կտորները: Վերջնել այնքան՝
 որպէս զե մի ֆուետ ծծումբը ընկնի 6
 արշինանոց երկայնութեան և լայնութեան
 խորձթին կամ սինեակին: Նորերը կախանել
 այս իսկ բնակութեան մէջ: Վառել ծր-
 ծումբը, կողպել դռները. և այնպէս
 թողնել առաւօտից մինչև երեկոյ. իսկ
 եթէ կարելի է՝ և աւելի շատ: Իսկ խըր-
 ձիթը բացանելուն պէս՝ սկզբից ծծումբը
 քամու տալ և սպառ յետոյ մաննել բնակու-
 թեան համար:

Այնտեղ, ուր կայ ոտաց ձանապարհ՝
 որի մէջ գնում էին տկարները. և որոնց
 մէջ մանաւանդ բուն են դրել տարափո-
 խեկ ախտերը, հարկաւոր է նրանց չոր
 հողով ծածկել. իսկ եթէ կարելի է ածել

որջառայ 17) բացանելով ջրի մէջ— երկու
Փունար մի դոյլի 18) մէջ. և հաշուելով
այսչափ քանակութիւնը 40 մարդոյ հա-
մար օրու զիշերուայ մէջ:

Ս. Կ. Ր. Ջ.



17) Купоросъ, — Պարսկերէն՝ զալ՝ Ծ. Թ.։
18) Ведро, — ջրհան։

Արդէն տպագրվում են
ՕՐԱՅՈՅՑ մեծադիր
1881 թ. Գ.

Հանդերձ գուշակութեամբ օդոց: Յունաց,
Ռուսաց և Լատինացւոց տօներով: Օրհ
Հոց՝ Մկ՝ և Հմբ՝ դրուած են կարգաւ:

ՎԵՅԵՐՈՐԿ՝ ՏԱՐԻ:

ՍԿԶՐՈՒԾԸ ԼԻՆԵԼՈՒ Է ՊԵՏԿԵՐ. ՎԵՐՋՈՒԾԸ

ԾԱՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՅ

յաւելուածով. Զ. Տ.

Պարագիր **ՕՐԱՅՈՅՑ** 1881 թ. գինն է 15 կ.

100 օվ զնորներին զիջում ԿԼԻՆԻ:

2962

Գինն է ամենայն տեղ 15 կ.

100-ներով գնողաց ղեջում կլինի:



Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն

Մեր տպարանում ընդունում ենք ամեն տեսակ սրտուերներ, թէ Հայերէն և թէ Ռուսերէն. ցանկացողք կարող են դիմել: Պատուերները կատարում ենք ճշտու թեամբ, մաքուր, շատ, և չափաւոր գներով:



Մեր հասցին՝

Եւ Զրիսան

Ա. ԿՄԱՆԱԿՅԱՆ

Հարգելի ամեն զեք

2013

« Ազգային գրադարան »



NL0074147

